ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԵՐԵՎԱՆԻ ՋԷԿ» ՓԲԸ

ՀՀ, ք. Երևան 0053, Արին-Բերդի փ. 3-րդ նրբ., 3

MINISTRY OF TERRITORIAL ADMINISTRATION
AND INFRASTRUCTURES OF RA

"YEREVAN TPC" CJSC

RA, 0053 Yerevan, Arin-Berdi st. 3rd Lane, 3

№ ԱԲ/510-2024

08.11.2024թ.

«Էյչ Գրուպ» ՍՊԸ
տնօրեն Կ. Հարությունյանին
Հասցե՝ ՀՀ ք. Երևան, Բաշինջաղյան 1 փ., 13/30
ՀՎՀՀ՝ 01254973
Էլ. հասցե՝ khv_84@mail.ru

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագրի միակողմանի լուծելու մասին

Հարգելի՛ պարոն Հարությունյան

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի միջև (այսուհետ՝ Վաճառող) 15.07.2024 թվականի հուլիսի 7-ին կնքվել է « ԵՋԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/55» ծածկագրով պայմանագիր:

Ձեր կողմից մատակարարված ապրանքի վերաբերյալ 22.10.2024թ-ին պատասխանատու ստորաբաժանման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրվել է բացասական եզրակացություն այն հիմքով, որ 14.10.2024թ-ին Ձեր կողմից մատակարարված միկրոֆիլտրացնող քարտրիջները արտադրողի անհրաժեշտ պատշաճ մակնշում չունեն, չկան CLR5295 կամ EB-005-750 մակնշում անհատական փաթեթների վրա, արկղերի վրայի մակնշման մեջ տարբերություն կար առկա նույն արտադրողի ապրանքից, արկղերի տարբերություն կար գործարանայինից, ինչի պատճառով ապրանքը չի ընդունվել: Հետևաբար ձեր կողմից մատակարաված վերոգրյալ ապրանքը չի համապատասխանում երկկողմ հաստատված Պայմանագրին:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա/ ենթակետի և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ, պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան: Օրենսգրքի 352-րդ հոդվածի համաձայն եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության

բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Ուստի՝ «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ն հրաժարվում է պայմանագրից, համարելով այն միակողմանի լուծված:

Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված ՀՀ կառավարությաքն 2017 թ-ի մայիսի 4-ի թիվ 526-ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն, սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրվանից:

Հաշվի առնելով վերոգրյալն՝ առաջարկում ենք «ԵՋԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/55» ծածկագրով գնման պայմանագրի տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի և որակավորման ապահովումները ՝ համապատասխանաբար 249890 (երկու հարյուր քառասունինը հազար ութ հարյուր իննսուն) ՀՀ դրամ և 374836 (երեք հարյուր յոթանասունչորս հազար ութ հարյուր երեսունվեց) ՀՀ դրամ գումարների չափով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում ամբողջությամբ փոխանցել Արդշինբանկ ՓԲԸ, Շենգավիթ մ/ճ 2473600002170010 հաշվեհամարին և այդ մասին գրավոր տեղեկացնել «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ին՝ կցելով վճարումը հավաստող փաստաթուղթը (անդորրագիրը):

Տեղեկացնում ենք, որ վերոգրյալ վճարման ենթակա գումարները «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի հաշվեհամարին սահմանված կարգով և ժամկետներում փոխանցվելու դեպքում, Ընկերության նկատմամբ չեն կիրառվի «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված դրույթները:

X _____

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ Պ/Կ

Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Կատարող՝ Մատակարարման և Գնումների
բաժնի պետ,Դ. Գրիգորյան
Հեռ. 011 47 27 71

Հավելված
ՀՀ ֆինանսների նախարարի
2017 թվականի մայիսի 20-ի
N 228-Ն հրամանի

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«22» «10» 2024 թ.

Պայմանագրի անվանումը՝ «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «15» « հուլիսի » 2024թ.

Պայմանագրի համարը՝ **<< ԵՋԷԿ-ԷԱՃԱՊՁԲ -24/55>>**

Պատվիրատուի անվանումը՝ **«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ**

Պայմանագրի կողմի անվանումը՝ **«Էյչ Գրուպ» ՍՊԸ**

Վերոհիշյալ պայմանագրի շրջանակներում պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների, կատարված աշխատանքների, մատուցված ծառայությունների					
	Անվանումը	Տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	Քանակական ցուցանիշը		Կատարման ժամկետը	
			Ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	Փաստացի	Ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	Փաստացի
1	Միկրոֆիլտրացնող քարթրիջներ	Համաձայն հրավերի	552	552	03.09.2024թ.	14.10.2024թ.

Նշումներ անհամապատասխանությունների մասին՝
Մատակարարված միկրոֆիլտրացնող քարտրիջները արտադրողի անհրաժեշտ պատշաճ մակնշում չունեն, չկան CLR5295 կամ EB-005-750 մակնշում անհատական փաթեթների վրա, արկղերի վրայի մակնշման մեջ տարբերություն կար առկա նույն արտադրողի ապրանքից, արկղերի վրա կա տարբերություն գործարանայինից:

Հիմք ընդունելով վերոգրյալը, տալիս եմ _____ եզրակացություն:

«22» «10» 2024 թ. Գնման հայտը նախագծած ներկայացուցիչ՝ Տ. Ղևոնդյան/

Համաձայնացած է՝ Դ. Մադոյան/

Digitally signed by AVAGYAN STEPAN
2003800409
Date: 2024.11.11 16:10:36 AMT